
ԴԵՄԻՐՃՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՈՒ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ (1905–1988 թթ.)

ԱՐԾՎԻ ՀՈՒՆԱՆՅԱՆ

Դ. Դեմիրճյանի ստեղծագործական գրեթե առաջին քայլերից սկսած քննադատությունը և գրական հասարակայնությունը ուշադիր վերաբերմունք է ցուցաբերել նրա նկատմամբ, ոչ միայն նկատել ու խրախուսել շնորհալի սկսնակի նորամուտը, այլև հետևել նրա գեղարվեստական որոնումներին ու առաջընթացին: Ինքնատիպ տաղանդի դրոշմը կրող նրա չափածո ու արձակ առաջին գործերն անարձագանք չեն մնում: Ժամանակի հայ մամուլում («Մուրճ», «Մշակ», «Հորիզոն») տպագրվում են գրախոսություններ երիտասարդ գրողի բանաստեղծությունների և թատերախոսություններ նրա պիեսների բեմադրությունների վերաբերյալ: Դ. Դեմիրճյանի մասին առաջին հոդվածը՝ նվիրված նրա «Ուխտավորներ» և «Աշուղի հեքիաթը» երկերի քննությանը, տպագրվել է 1905-ին «Մուրճ»¹ ամսագրում: Մամուլի հաջորդ անդրադարձը գրողի ստեղծագործությանը տեղի է ունենում միայն ութ տարի հետո՝ 1919-ին, երբ նրա բանաստեղծությունների ժողովածուի մասին «Մշակում» լույս է տեսնում ապագա նշանավոր գրականագետ, քննադատ Հ. Սուրխաթյանի հոդվածը²: Վերջինս մեկ տարի անց «Մշակում» տպագրում է նաև թատերախոսական նվիրված Դ. Դեմիրճյանի առաջին պիեսի՝ «Վասակի» բեմադրությանը³, որ իրականացրել էր Թիֆլիսի հայոց դրամատիկական խումբը: Երիտասարդ շնորհալի քննադատի երկու հոդվածները առաջին քայլերն անող գրողի մասին վկայում էին, որ վերջինիս ստեղծագործությունն աստիճանաբար սկսում է ավելի ու ավելի շատ հետաքրքրություն հարուցել գրական-հասարակական միջավայրում:

1910-ական թվականների վերջերին ծավալվում է Դ. Դեմիրճյանի դրամատուրգիական գործունեությունը, և պատահական չէ, որ 1918–1919 թթ. հայ մամուլում նրա մասին եղած հոդվածներն ու հրապարակումները վերաբերում են «Դատաստան» դրամայի և «Ազգային խայտառակություն» կոմեդիայի բեմադրություններին⁴: Գրողի պատմական դրամաները բուռն հետաքրքրություն են առաջացնում գրական ու թատերական շրջանակներում և առհասարակ լայն հասարակայնության մեջ: Եթե Դեմիրճյանի չափածո և արձակ երկերը արժանանում էին քննադատության թեև զուսպ, բայց գրեթե միանշանակ դրական գնահատականին և ընթերցողների համակրական

¹ «Մուրճ», 1905, № 7, էջ 116:

² «Մշակ», 1913, № 272, էջ 3–4, № 273, էջ 3:

³ «Մշակ», 1914, № 34, էջ 3:

⁴ «Մշակ», 1918, № 29, էջ 4, № 226, էջ 2, «Հորիզոն», 1918, № 166, էջ 1, № 31, էջ 4, «Մշակ», 1919, № 35, էջ 3–

կամ սառն ու անտարբեր վերաբերմունքին, ապա թատերգությունները կրքեր էին բորբոքում, ծնում հակադիր, իրարամերժ կարծիքներ և պայքար: Գրողի 1910-ական թվականներին գրած «Վասակ», «Դատաստան», «Ազգային խայտառակություն» և «Հովնան Մեծատուն» պիեսներից առաջին երեքը բեմադրվել են ու ժամանակի հայ մամուլում ունեցել արձագանքներ, որոնք, սակայն, սակավ բացատրությամբ («Դատաստանին» վերաբերող հոդվածները), քննադատական բնույթ են կրել կամ բացահայտորեն անբարյացակամ ու աչառու են եղել:

Նկատենք, որ նախախորհրդային 15 տարիների (1905–1920 թթ.) ընթացքում երիտասարդ շնորհաշատ գրողի մասին մամուլի էջերում եղած, բնականորեն ոչ բազմաբանակ հրապարակումները ոչ միշտ էին անաչառ և պատշաճ մակարդակի:

* * *

Դ. Դեմիրճյանի մասին անհամեմատ ավելի շատ և առավել բովանդակալից հոդվածները տպագրվել են խորհրդային տարիներին: Այս շրջանում գրողը թողնում է բանաստեղծությունը և զբաղվում միայն արձակով ու դրամատուրգիայով: Նա գրում է «Քաջ Նազար», «Նապոլեոն Կորկոտյան» կատակերգությունները, «Հաղթական սիրո երգը», «Ճոսֆորային շող», «Կապուտան» արդիական պիեսները և «Երկիր հայրենի» պատմական դրաման: Այս բոլոր գործերն էլ առավել կամ նվազ հաջողությամբ բեմադրվում են և արժանանում քննադատության ու շաղկապությանը: Շատ հետաքրքիր է ու հատկանշական, որ նոր կարգերի հաստատումից հետո, 1922-ից մինչև 1926-ը ներառյալ հրապարակվել են միայն գրողի պիեսների («Դատաստան» և «Քաջ Նազար») բեմադրությունների վերաբերյալ թատերախոսականներ⁵, իսկ դա վկայում է, որ նրա դրամատուրգիայի նկատմամբ հետաքրքրությունը խորհրդային տարիներին ոչ միայն չի նվազում, այլև ավելի է մեծանում: Աստիճանաբար առավել հայտնի են դառնում հեղինակի պիեսները, մասնավորապես «Քաջ Նազարը» բեմադրվում է ոչ միայն Երևանում, այլև Թիֆլիսում ու Բաքվում և արժանանում գրական ու թատերական հասարակության ջերմ ընդունելությանը, քննադատության դրական գնահատականին: Հետագայում Դ. Դեմիրճյանի գրական գործունեության բուռն ծավալման, տաղանդի առնականացման և վարպետության կատարելագործման հետ նրա երկերի նկատմամբ քննադատության հետաքրքրությունը մեծանում է: Հաջորդ երկու

⁵ Հ. Ն ա թ. Դատաստան (Մունդուկյանի անվան թատրոնում բեմադրվելու առթիվ).– «Խորհրդային Հայաստան» (այսուհետև՝ ԽՀ), 1922, № 256, էջ 4, I ե ռ Կ ա մ ս ա թ. «Դատաստանին Դատաստանը» (Դ. Դեմիրճյանի «Դատաստան» պիեսի մասին).– ԽՀ, 1923, № 29, էջ 4, Հայկական թատրոն (Դեմիրճյանի «Դատաստան» դրամայի բեմադրման մասին).– «Կոմունիստ», Բաքու, 1923, № 149, էջ 4, Գ. Ա բ ո վ. Քաջ Նազար (բեմադրման առթիվ).– ԽՀ, 1944, № 270, էջ 3, Կ ա թ ա - Դ ա թ վ ի շ. Քաջ Նազար – Դ. Դեմիրճյանի (Ռուսթավելու թատրոն).– «Մարտակոչ», Թիֆլիս, 1924, № 91, էջ 4, Ս ա թ ու լ ջ յ ա ն. «Քաջ Նազար» – Դեմիրճյան (Ռուսթավելու թատրոնում բեմադրելու առթիվ).– «Մարտակոչ», Թիֆլիս, 1924, № 277, էջ 4, Ս ա թ ու լ ջ յ ա ն. «Քաջ Նազար» Դ. Դեմիրճյանի. (Ռուստավելու թատրոնում բեմադրելու մասին).– «Մարտակոչ», Թիֆլիս, 1924, № 91, էջ 4, A l t a l e n a. «Քաջ Նազար», Դ. Դեմիրճյանի.– ԽՀ, 1925, № 256, էջ 4, թատերասեր, «Քաջ Նազար» Դ. Դեմիրճյանի (Բաքվում բեմադրվելու կապակցությամբ).– «Կոմունիստ», Բաքու, 1926, № 42, էջ 4:

տասնամյակներում գրողի մասին գրվում են բազմաթիվ հոդվածներ, որոնցում տարբեր տեսանկյուններից քննվում է նրա հարուստ ու բազմաժանր ստեղծագործությունը:

Նոր կարգերի հաստատումից հետո՝ մինչև 1927 թվականը, աշխուժորեն արձագանքելով Դ. Դեմիքրատի «Դատաստան» դրամայի և «Քաջ Նազար» կոմեդիայի բեմադրություններին ու տպագրելով բազմաթիվ թատերախոսականներ՝ մամուլը հետագա տարիներին էական քիչ բան է հրապարակել նրա մասին, եթե նկատի չունենանք մի քանի շարքային գրախոսություններ ու «Դ. Դեմիքրատի ստեղծագործության սոցիալական բովանդակությունը» խորագրով արդեն ավելի ծավալուն ու տարողունակ հոդվածը⁶, որի հեղինակը Ռ. Աթայանն էր: Հիշատակության արժանի է նաև գրողի պատմվածքների գրքի համար գրական քննադատ Գ. Վանանդեցու գրած առաջաբանը⁷: Այս է ամբողջը: Եվ եթե նկատի ունենանք, որ տասնամյակի գրեթե վերջում՝ 1928 թ., նորից թատերախոսական է գրվում և այս անգամ արդեն Դ. Դեմիքրատի պատմահեղափոխական թեմայով գրած «Հաղթական սիրտ երգը» կարճ պիեսի բեմադրության մասին⁸, ապա դժվար չէ հետևեցնել, որ 1920-ական թվականներին քննադատությունն առավելապես զբաղվել է հայ տաղանդավոր գրողի դրամատուրգիայի բեմական-թատերական կյանքով՝ համեմատաբար նվազ ուշադրություն դարձնելով նրա արձակ գործերին: Եվ դա պատահական չէր, քանզի նախահեղափոխական տարիներին գրած իր լավագույն դրամայով՝ «Դատաստանով» և հատկապես խորհրդային շրջանում՝ 1923-ին, ստեղծած «Քաջ Նազար» անզուգական կոմեդիայով ու մանավանդ դրանց խանդավառ ընդունելություն գտած հաջող բեմադրություններով, Դ. Դեմիքրատի դրամատուրգը մոլորում էր առաջին պլան: Սա բացատրվում էր նաև այն հանգամանքով, որ անցյալ դարում և նոր հարյուրամյակի սկզբում հայ ժողովուրդն ունեցել էր դասական դրամատուրգներ՝ Սունդուկյան, Պարոնյան, Շիրվանզադե, Շանթ ու, բնականաբար, ակնկալում և ուզում էր, որ իր պատմության նոր շրջափուլում արդեն առկա մեծ բանաստեղծների (Ե. Չարենց և այլք) և տաղանդավոր արձակագիրների (Ա. Բակունց և այլք) կողքին ունենալ նաև իր դասական դրամատուրգը: Ըստ որում, նա այս առումով հույսեր էր կապում միայն Դ. Դեմիքրատի հետ:

Ու չպիտի զարմանալ, որ նույնիսկ 1930-ական թվականներին Դ. Դեմիքրատի մասին տպագրված հոդվածների մեջ նորից պատկառելի տեղ են գրավում այնպիսիք, որոնք նվիրված են գրողի դրամատուրգիային և գլխավորաբար պիեսների բեմադրություններին: Ուշագրավ են հատկապես «Քաջ Նազար» (Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում, Բաքվի հայկական թատրոնում) ու նրա հիման վրա ստեղծված համանուն օպերայի բեմադրություններին նվիրված թատերախոսականները, որոնցում, սակայն, հռչակավոր կոմեդիայի մասին խոսվում է մակերեսային ձևով ու հպանցիկ: Հիրավի, 1920-ական թվականներին «Քաջ Նազար»-ի և նրա բե-

⁶ «Գրական դիրքերում», 1929, № 11, էջ 38-52:

⁷ Դ. Դեմիքրատի. Պատմվածքներ, Երևան, 1928:

⁸ ԽՀ, 1928, № 79, էջ 4:

մադրությունների գրական-թատերական արձագանքները թեև շատ հարուստ էին, բայց մեծ մասամբ հիացական, ոչ պրոֆեսիոնալ կարծիքներ էին՝ առանձին ճիշտ դիտողություններով ու նուրբ նկատումներով հանդերձ: Մամուլի այդ հրապարակումներում չկար գրողի ստեղծագործությունների մասնագիտական վերլուծություն:

Նույնը, որոշ վերապահումներով, պիտի ասել նաև 1930-ական թվականներին Դ. Դեմիրճյանի նոր գրած պիեսների բեմադրությունների առիթով տպագրված թատերախոսականների մասին: Միակ դրական կողմն այն է, որ դրանցում կտրուկ պակասում, նույնիսկ անհետանում է ապացույցների վրա չհիմնված դրվատական տոնը: Ընդհակառակը, այս հողվածներում առկա է քննադատական ջիղը: Մա, իհարկե, առաջին հերթին պիտի բացատրել այն հանգամանքով, որ հիմա արդեն Դ. Դեմիրճյանը միայն գրուիզործոցներ չէր մատուցում հասարակությանը և նրա «Տոսֆորային շող» (1932 թ.), «Կապուտան» (1939 թ.) հեքուսական դրամաները թույլ կամ միջակ ու միաժամանակ վիճահարույց գործեր էին և, բնականաբար, քննադատական վերաբերմունք ու տարակարծություններ էին հարուցում: Նշենք, որ 1930-ական թվականներին Դ. Դեմիրճյանի գրած չորս պիեսների մեջ ուշագրավ ու արժեքավոր էին միայն երկուսը՝ «Նապոլեոն Կորկոտյան» (1933 թ.) երգիծական կոմեդիան և «Երկիր հայրենի» (1939 թ.) պատմական դրաման: Եվ եթե վերջինն արժանացավ անվերապահ դրական գնահատականի, ապա առաջինը միահամուռ բացասական, ուղղակի ժխտական քննադատության թիրախ դարձավ: Պատճառն այն էր, որ «Նապոլեոն Կորկոտյան» կոմեդիան ուներ սուր քննադատական-մերկացնող բնույթ. հեղինակը երգիծական արվեստի գործուն միջոցներով ցույց էր տալիս, թե նոր հասարակարգում էլ անհատապաշտությունը, օգտապաշտական հոգեբանությունը գոյատևում է և իր շահատակությունները կատարում խորհրդային տնտեսությունում, ուր պետական-հանրային ունեցվածքը, ժողովրդական բարիքն անխնա խժռում և թալանում են հենց սովխոզի դիրեկտորն ու նրա համախոհները: Պարզ է, որ այն ժամանակներում նման հանդգությունը անպատիժ չէր կարող մնալ, և Դ. Դեմիրճյանի կոմեդիան ու նրա բեմադրությունն արժանացան միահամուռ ջախջախիչ քննադատության: Հանրապետության մամուլում միանգամից լույս է տեսնում նման ութ հողված⁹, եթե հաշվի չառնենք Բարեղամ Պահլավունու դերակատար Ավ. Ավետիսյանի «Ինչպես եմ հասկանում և ստեղծագործում իմ դերը» ըստ բնույթի դրական կամ չեզոք հողվածը¹⁰:

⁹ Ն. Ջ ա թ յ ա ն. Հայկական իրականության այլանդակ պատկերումը («Նապոլեոն Կորկոտյանի» բեմադրության առթիվ).- ԽՆ, 1934, № 262, էջ 2, Վ. Թ ե թ զ ի բ ա շ յ ա ն. Դ. Դեմիրճյանի կոմեդիայի մասին («Նապոլեոն Կորկոտյան» պիեսի մասին).- ԽՆ, 1934, № 284, էջ 3, Ս. Հ ա թ ո լ թ յ ու ն յ ա ն. «Նապոլեոն Կորկոտյանը» որպես կատակերգություն.- «Գրական թերթ», 1934, № 31, էջ 3, Գ. Հ ն վ ն ա ն. Բաց նամակ դրամատուրգ ընկ. Դերենիկ Դեմիրճյանին («Նապոլեոն Կորկոտյանի» և նրա բեմադրության մասին).- «Գրական թերթ», 1934, № 32, էջ 3, Գ. Ս ա հ ա թ ի. Լավը տեսնելու ցանկություն (Դ. Դեմիրճյանի «Նապոլեոն Կորկոտյանի» բեմադրության առթիվ).- ԽՆ, 1934, № 268, էջ 3, Հ. Ն ա յ ու ն ց. «Նապոլեոն Կորկոտյան» և նրա բեմադրությունը (Կարմրադրոշ առաջին պետադրոնում).- «Խորհրդային արվեստ», 1934, № 11, էջ 6-8, Գ. Ս ա Ֆ ա թ յ ա ն. Դ. Դեմիրճյանի «Նապոլեոն Կորկոտյան» պիեսի մասին.- «Կոմունիստ», 1934, № 107, էջ 4 (ռուս.), Գ. Գ., Գ. 2., ԹՉնամու ժպիտը, «Նապոլեոն Կորկոտյան».- «Կոմունիստ», Երևան, 1934, № 102, էջ 4 (ռուս.):

¹⁰ ԽՆ, 1934, № 252, էջ 4:

Ղեկավարվելով ժամանակի հասարակական-քաղաքական մտայնությամբ ու գեղագիտական սկզբունքներով, տուրք տալով գոեհիկ սոցիոլոգիական հայացքներին և էլնելով գաղափարական հայտնի նախապաշարումներից ու կաղապարներից՝ հողվածագիրները Դ. Դեմիրճյանին մեղադրում են կյանքի սովերենները խտացնելու, լավը չտեսնելու, գաղափարական-քաղաքական սխալ դիրքորոշման, սոցիալիստական իրականությունը, սովետական մարդուն ծուռ հայելու մեջ ցույց տալու մեջ: Պարզ է, որ այս ամենը ճիշտ չէր, այս բանադրանքներն անհիմն էին ու հնարովի, բայց ինչ կարող էս անել, եթե ժամանակի մտածողությունն այդպիսին էր, և թերություն էր համարվում ու դատապարտվում այն, ինչը կոմեդիայի արժանիքն էր: Դեմիրճյանը տակավին ստալինյան գորանոցային սոցիալիզմի կառուցման արշալույսին խորթափանցորեն նկատել էր այնպիսի մերժելի երևույթներ (օգտապաշտություն, հանրային բարիքի յուրացում, աչքակապություն), որոնք հասարակական մեծ չարիք էին թե՛ 1930-ական թվականներին և թե՛ մանավանդ հետագա տասնամյակներում: Այո, այդ չարիքը, ի զարմանս մեզ, սոցիալիզմի գոյության 70 տարիների ընթացքում ոչ միայն չնվազեց ու չանհետացավ, այլև ավելի գորացավ: Եվ չպետք է զարմանալ, որ մեծ գրողի խորթափանցությունն ու մարգարեական հեռատեսությունը գնահատվեց իբրև ոչ խորհրդային, գրեթե թշնամական դիրքորոշում: Բավական է հիշել թեկուզ նրա կոմեդիայի բեմադրության մասին գրված հողվածներից մեկի խորագիրը՝ «Թշնամու ժպիտը»:

Ցավալի է արձանագրել, որ Դ. Դեմիրճյանի արժեքավոր ու մնայուն երկրորդ երգիծական կոմեդիայի և նրա անդրանիկ բեմադրության հետ կապված այս տխուր պատմությունը (մամուլում տպագրված ժխտական հողվածներից և քննարկումներում հնչած ջախջախիչ քննադատությունից հետո «Նապոլեոն Կորկոտյանը» հանվեց Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի խաղացանկից, իսկ Դեմիրճյանն այլևս երգիծական կոմեդիա չգրեց) ոչ միայն գրողի գրական կենսագրության մտայլ դրվագներից է, այլև խորհրդահայ գրական քննադատության ու մասնավորապես դեմիրճյանագիտության ամոթալի սև էջը:

1930-ական թվականներին քննադատությունը սևեռուն ուշադրություն է դարձնում նաև Դ. Դեմիրճյանի արդիական թեմայով գրված մյուս պիեսներին: Տպագրվում են հողվածներ նվիրված «Ֆոսֆորային շող» և «Կապուտան» հերոսական դրամաների բեմադրություններին: Այս դեպքում մամուլը, կարծես թե, օրյեկտիվ էր և բարյացակամ, քանի որ ժամանակի գաղափարական-քաղաքական ու գեղագիտական ըմբռնումների տեսակետից այս երկու պիեսները ոչ միայն խոցելի չէին, այլև հույժ մոդայիկ թեմա էին արժարժում և իրենց էությամբ համահունչ էին ստալինյան մեծ ռեպրեսիաների ժամանակի ոգուն ու չարաղետ միտումներին: Բնականաբար, թատերախոսները, ըստ հնարավորին, ընդգծում էին այս դրամաների սակավ ու չնչին առավելությունները և ներողամտորեն խոսում առկա էական թերությունների մասին, արտահայտում ցանկություններ, նշում Դ. Դեմիրճյանի դրամատուրգիական գործունեության մեջ արդիական թեմատիկայի կարևորության և դրա յուրացման ուղղությամբ գրողի կատարած խրախուսելի քայլերի մասին: Բնորոշ է, որ կեղծ,

սարքովի, բայց տարածված ու այն ժամանակներում հարգի նյութի (վնասարարություն) վրա ստեղծված միջակ պիեսների մասին գրվում է բարյացակամորեն, իսկ ռեալիստական արժանահավատությամբ ու երգիծական կրքով ստեղծված տաղանդավոր կոմեդիան ենթարկվում է սպանիչ քննադատության: Մա ժամանակի հատկանշական գիծն էր: «Ֆուֆորային շողի» երևանյան (պետական առաջին թատրոնում) և թիֆլիսյան (Ռուսթավելու անվան թատրոնում) բեմադրությունների մասին հրապարակված հինգ և «Կապուտանի» բեմադրությանը նվիրված երեք թատերախոսականները պերճախոս վկայությունն են այն բանի, թե այդ օրերին ինչն էր գովաբանվում և ինչը պախարակվում, թե որքան հակազդիտական ու հակազեղազիտական էին մտտեցումներն ու չափանիշները և ինչքան դժվար էր, գրեթե անհաղթահարելի իսկական տաղանդավոր, ճշմարտացի երկի անցնելիք ճանապարհն այն օրերին:

Քննադատության կողմից անվերապահ դրական գնահատականի, և այս անգամ, ինչպես և «Քաջ Նազարի» պարագայում, իրավացիորեն, արժանանում է Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» պատմական դրաման, որը, իրոք, բարձրարժեք գեղարվեստական երկ է: Եվ ահա, այդ հայրենասիրական պիեսի Սունդուկյանի անվան պետական թատրոնում իրականացված փայլուն բեմադրության մասին հանրապետական և կենտրոնական (Սունդուկյանի անվան թատրոնի մոսկովյան գաստրոլների ժամանակ) մամուլում տպագրվում են բազմաթիվ հոդվածներ, որոնք վերլուծում ու արժեքավորում են ռեժիսոր Վ. Աճեմյանի և դերակատարների կատարած ստեղծագործական արգասավոր աշխատանքը: Գրողի այս պատմական դրաման բեմադրվեց պատերազմի նախօրյակին՝ 1940-ին և մեծ հաջողությամբ ներկայացվեց մեր հայրենիքին բաժին ընկած մեծ փորձության բոլոր տարիներին՝ մշտապես արժանանալով խանդավառ ընդունելության: Քննադատությունը միահամուռ ընդգծում էր պիեսի և բեմադրության ոչ միայն գեղարվեստական ակնառու արժանիքները, այլև հայրենասիրական բովանդակությունն ու հերոսականությունը, արդիական հնչողությունը, հատկապես պատերազմի ահեղ օրերին նրա ունեցած բացառիկ դաստիարակչական-գոտեպնդող նշանակությունը: Հարուստ ու արժեքավոր են Դ. Դեմիրճյանի այս վերջին դրամատուրգիական երկի մասին մամուլում եղած արձագանքները: Այս տեսակետից նա կանգնում է «Քաջ Նազարի» և «Նապոլեոն Կորկոտյանի» կողքին: «Երկիր հայրենի» մասին գրեցին այն բեմադրող ռեժիսոր Վարդան Աճեմյանը¹¹ և գլխավոր դերակատարներից մի քանիսը¹², գրականագետ Մ. Մկրյանը¹³ և թատերագետ Ս. Բարսեղյանը¹⁴, գեներալ Բ. Տյուլենևը¹⁵, գրող Մ. Շահինյանը¹⁶ և ուրիշ շատերը¹⁷:

¹¹ Վ. Աճեմյան. Հայ ժողովրդի մեծ հայրենասիրությունը (Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» պիեսը բեմադրելու մասին). – ԽՀ, 1940, № 162, էջ 3:

¹² Բ ու ի ա թ յ ա ն. Հայրենիքի մեծ պատրիոտի տիպարը (Պահլավունու դերը «Երկիր հայրենի» պիեսում). – ԽՀ, 1940, № 162, էջ 3, Ա. Մ կ ր տ ու մ յ ա ն. Արքայամոր դերը («Երկիր հայրենի» պիեսի մեջ). – ԽՀ, 1940, № 162, էջ 3, Վ. Վ ա դ ա ր շ յ ա ն. Տանք բարձրարժեք ներկայացում (Գազիկի դերը «Երկիր հայրենի» պիեսում). – ԽՀ, 1940, № 16, էջ 3:

Տեղական և կենտրոնական մամուլի էջերում տարբեր մարդկանց գրած բազմաթիվ հոդվածներում բազմակողմանիորեն քննվում ու գնահատվում է հայ մեծ գրողի պատմա-հայրենասիրական այս դրաման, արժեքավորվում նրա կենսական-գաղափարական հարուստ բովանդակությունը, արդիական շունչը և գրական-դրամատուրգիական արժանիքները:

Բնչպես տեսնում ենք, գրեթե երեք տասնամյակի ընթացքում՝ 1920-ական թվականներից 1956 թվականը (գրողի մահվան տարին), թատերագրի երկերի բեմադրությունների վերաբերյալ շատ ու բազմազան հոդվածներ են հրապարակվել, իսկ նրա դրամատուրգիային նվիրված ընդամենը երեք¹³ և առանձին պիեսների մասին մի քանի հոդված են տպագրվել: Դ. Դեմիքրատյանը, սակայն, իր կյանքի վերջին տարիներին բախտ ունեցավ ծանոթանալու Տ. Հախումյանի ծավալուն ուսումնասիրությանը, որը դարձավ քննադատի թեկնածուական ատենախոսությունը, իսկ մի քանի տարի անց՝ 1958-ին, այն տպագրվեց առանձին գրքով: Այսպիսին է դեմիքրատիկ տության մի առանձին ճյուղի (որը զբաղվել է գրողի թատերագրությամբ) զարգացման անհարթ, բարդ ու հակասական ուղին:

¹³ Մ. Մ կ ր յ ա ն. Երկիր հայրենի (Դ. Դեմիքրատյանի պիեսի առթիվ).– «Գրական թերթ», 1941, № 11, էջ 4, և ու յ ն ի՝ Երկիր հայրենի (Մոսկվայում հայ գրականության տասնօրյակին բեմադրելու մասին).– «Սովետական Հայաստան», 1941, № 112, էջ 3:

¹⁴ Մ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Երկիր հայրենի (Դեմիքրատյանի այս պիեսի առաջին բեմադրության թատերախոսություն).– «Կոմունիստ», 1941, № 110, էջ 2 (ռուս.):

¹⁵ Գեներալ Բ. Վ. Տյուլենևի կարծիքը «Երկիր հայրենի» պիեսի մասին. – «Սովետական գրականություն», 1941, № 7, էջ 50–55:

¹⁶ Մ. Շ ա հ ի ն յ ա ն. Երկիր հայրենի: Մունդուկյանի անվան հայկական թատրոնի ներկայացումը. – «Կոմսոմոլսկայա պրավդա», 1941, № 134, էջ 3 (ռուս.):

¹⁷ Մ. Ա ր ու տ չ յ ա ն. Թե ինչպես եմ ձևավորում «Երկիր հայրենին». – ԽՀ, 1940, № 162, էջ 3, Ո ս կ ա ն. Երկիր հայրենի (Մունդուկյանի անվան թատրոնում բեմադրելու առթիվ). – «Սովետական Հայաստան», 1940, № 260, էջ 3, Մ. Ն ա ի ր յ ա ն. Երկիր հայրենի (Մունդուկյանի անվան թատրոնի նոր բեմադրությունը). – «Կոմունիստ», Երևան, 1940, № 260, էջ 3, Ն. Լ ու չ ի ն ս կ ի. Հայրենասիրական պոեմ (Դ. Դեմիքրատյանի «Երկիր հայրենի» բեմադրության Գ. Մունդուկյանի անվան թատրոնում). – «Կոմունիստ», Երևան, 1940, № 174, էջ 4, Ն. Լ ու չ ի ն ս կ ի. Հայրենասիրական պոեմ (Դ. Դեմիքրատյանի Երկիր հայրենի» մասին). – «Սովետական գրականություն», 1941, № 8, էջ 73–74, Ղ ո թ ղ ա ն յ ա ն. Երկիր հայրենի (Չքանչանակի դրամատուրգ Դ. Դեմիքրատյանի նոր պիեսը). – «Սովետական Վրաստան», Թբիլիսի, 1941, № 118, էջ 3 (ռուսերեն), Վ. Վ ի ն ն ի կ ո վ. Երկիր հայրենի (Գ. Մունդուկյանի անվան հայկական թատրոնի հյուրախաղերը Մոսկվայում). – «Պրավդա», 1941, № 162, էջ 4 (ռուս.), «Կոմունիստ», Երևան, 1941, № 140, էջ 4, Մ. Ս ու վ ի ն ս կ ի. Երկիր հայրենի (Մունդուկյանի անվան Հայկական պետական դրամատիկական թատրոնի հյուրախաղերը). – «Իզվեստիա», 1941, № 138, էջ 4 (ռուս.):

¹⁸ Ա. Ա ր ց ա խ յ ա ն. Դերենիկ Դեմիքրատյանի դրամատուրգիայի շուրջը. – «Գրական թերթ», 1938, № 19, էջ 2, Տ. Հ ա խ ու մ յ ա ն. Դ. Դեմիքրատյանի դրամատուրգիայի էականը. – «Գրական թերթ», 1945, № 11, էջ 3, և ու յ ն ի՝ Դեմիքրատյան դրամատուրգը. – «Սովետական արվեստ», 1956, № 3, էջ 9–18:

* * *

Հայ գրական հասարակայնությունը, մամուլը, քննադատությունը Դ. Դեմիրճյանի գործունեության հենց սկզբից աչքաթող չի արել նրա բանաստեղծությունն ու արձակը, թեև դրանցով չի զբաղվել այնպիսի ակտիվությամբ ու կրքոտությամբ, ինչպես գրողի դրամատուրգիայով, մասնավորապես պիեսների բեմադրություններով: Նախահեղափոխական տարիներին ընդամենը երկու¹⁹, իսկ խորհրդային իշխանության առաջին տասնամյակում 4-5 հոդված է լույս տեսնում Դ. Դեմիրճյանի արձակի ու բանաստեղծական երկերի կամ ողջ ստեղծագործության մասին: Դրանցից են գրողի 1927-ին լույս տեսած «Ծանոթներ» խորագրով գրքի մասին գրախոսությունները, որոնք տպագրվել են նույն թվականին «Գրական դիրքերում» ամսագրում ու Բաքվի «Կոմունիստ» թերթում, ինչպես և Ռ. Աթայանի 1929-ին «Գրական դիրքերում» ամսագրի 11-րդ համարում հրապարակած «Դ. Դեմիրճյանի ստեղծագործության սոցիալական բովանդակությունը» հոդվածը: Սրան պետք է ավելացնենք գրողի 1928-ին լույս տեսած պատմվածքների ժողովածուի առաջաբանը, որ, ինչպես ասվեց, գրել էր Գ. Վանանդեցին, ինչպես նաև Հ. Սուրխաթյանի 1924-ին Թիֆլիսի «Մարտակոչում» տպագրած «Խորհրդային Հայաստանի գրական քառամյակը» հոդվածը, որում քննադատը, ի թիվս այլոց, անդրադառնում է նաև Դ. Դեմիրճյանի ստեղծագործությանը:

Այս է բոլորը: Մի ողջ տասնամյակի համար, սա, իհարկե, շատ քիչ է: Մանավանդ, որ այդ հոդվածների կեսը սովորական գրախոսություններ են, իսկ մեկն էլ (Սուրխաթյանի հոդվածը) նվիրված է ոչ միայն Դ. Դեմիրճյանին, այլ ողջ սովետահայ գրականության քառամյա (1920-1924 թթ.) ընթացքին:

Հաջորդ տասնամյակում՝ 1930-ական թվականներին (թեև նորից քննադատության ուշադրության կենտրոնում դրամատուրգ Դ. Դեմիրճյանն է ու նրա պիեսների բեմադրությունները) համեմատաբար ավելի մեծանում է հետաքրքրությունը գրողի ողջ ստեղծագործության նկատմամբ: Դրան նպաստում է Դեմիրճյանի գրական գործունեության 1931-ին լրացող 35-ամյակի տոնակատարությունը: Այդ առիթով, բնականաբար, հրապարակվում են արդեն ոչ թե գրախոսություններ գրողի հերթական գրքի, մի առանձին երկի կամ նրա գեղարվեստական արարչության այս կամ այն բնագավառի (պոեզիա, արձակ, դրամատուրգիա) մասին, այլ ողջ գրական վաստակին նվիրված ուսումնասիրություններ: Տպագրվում են Վ. Ատրյանի, Հ. Մկրտչյանի, Դ. Միմոնյանի և այլոց հավուր պատշաճի հոդվածները, որոնք առաջին քայլն էին Դեմիրճյանի անցած ճանապարհի և գեղագիտական որոնումների, ձեռքբերումների հանրագումարն անելու և ստեղծագործության ընդհանրացված գնահատականը տալու ուղղությամբ: Դա մի նոր սկիզբ էր և, բնական է, որ եղավ նաև շարունակություն: Մեկ տարի անց՝ 1932-ին Ս. Սողոմոնյանը հանդես եկավ «Դ. Դեմիրճյանի ստեղծագործության մասին» խորագրով հոդվածով, որում վերլուծելով գրողի բնորոշ

¹⁹ Դ. Դեմիրճյանի կ. Ուխտավորներ, Աշուղի հեքիաթը, Թիֆլիս, 1905 (գրախոսություն).- «Մուրճ», 1905, №7, էջ 116, Սուրխաթյանի Դ. Դեմիրճյան. «Բանաստեղծություններ»: Հրատ. կովկ. հայոց հրատարակչության, 1919 թ., գրախոսություն.- «Մշակ», 1913, № 272, էջ 3-4, № 273, էջ 3:

ու արժեքավոր բոլոր երկերը և բնութագրելով նրա գրական անցած ուղին՝ հանգել էր հետաքրքիր ընդհանրացումների: Հաջորդ տարում՝ 1933-ին, նույն քննադատը տպագրում է իր «Սոցիալիստական ռեալիզմի տարրերը Դեմիքրատիկ և Զորյանի վերջին երկերում» հոդվածը²⁰: Խորհրդային նշանավոր գրողին նվիրված նույնատիպ հոդվածով «Լիտերատուրնայա գագետայում» 1934-ին հանդես է գալիս գրականագետ Հ. Մելիքյանը²¹: Սրանով էլ ավարտվում է 1930-ական թվականներին Դեմիքրատիկ ստեղծագործությունների մասին գրված հոդվածների ցանկը:

1940-ական թվականներին քննադատությունը շարունակում է պատշաճ ուշադրություն դարձնել նախապատերազմյան և հետպատերազմյան շրջանում գրողի ստեղծագործական աշխատանքներին, քննադատները նորից բազմիցս անդրադառնում են գրողի ստեղծագործությանը: Հիշարժան են գրականագետ Խ. Այվազյանի երկու հոդվածները գրողի պատմվածքների և առհասարակ արձակի մասին²², ինչպես և 1930-ական թվականների երկրորդ կեսին ու 1940-ական թվականների առաջին կեսին նրա գրած այլ հոդվածները²³: Ավելի ուշ՝ պատերազմին հաջորդող տարիներին, տպագրվում են քննադատներ Հր. Մուրադյանի և Խ. Սարգսյանի²⁴ հոդվածները՝ նվիրված Դ. Դեմիքրատիկ արձակին: 1940-ական թվականների սկզբին հրապարակված գործերում, ասես, ավարտվում է գրողի փոքր արձակի (պատմվածք, նովել, մանրապատում և այլն) զարգացման օրինաչափությունների ու առանձնահատկությունների գրականագիտական քննության և գնահատության երկարամյա գործընթացը, քանի որ շուտով Դ. Դեմիքրատիկ թնկալիցում է մեծ արձակի ասպարեզ՝ հրապարակ բերելով իր վիպական գլուխգործոցը՝ «Վարդանանքը», որն էլ այնուհետև հայտնվում է քննադատության ուշադրության կենտրոնում:

Արձակագիր Դ. Դեմիքրատիկ ստեղծագործական ուղին հարթ ու նպատակասլաց վերելք չի եղել: Ինչպես դրամատուրգիայում, այնպես էլ արձակում գրողը միշտ չէ, որ հաջողության է հասել: Նա ստեղծել է ոչ միայն բարձրարժեք («Ավելորդը», «Գիրք ծաղկանց» և այլն) կամ ժամանակի պահանջների տեսակետից հաջող և ուշագրավ («Ռաշիդ», «Նիգյար», «Մաթոն» և այլն), այլև բազմաթիվ միջակ ու թույլ գործեր (պատմվածքներ, վիպակներ), ինչպես և գրական-գեղարվեստական արժանիքներով աչքի չընկնող «Նոր մոնումենտալը» վեպը: Եվ պետք է ասել, որ գրողի արձակում նրա խոշոր տաղանդին վայել մնայուն գործերի տեսակարար կշիռը շատ ցածր էր,

²⁰ «Վերելք», 1933, № 4, էջ 102–111:

²¹ Հ. Մելիքյանի և Դ. Դեմիքրատիկի «Լիտերատուրնայա գագետայում», 1934, № 123, էջ 3 (ռուս.):

²² Խ. Այվազյանի և Դ. Դեմիքրատիկի պատմվածքները. «Գրական թերթ», 1938, № 22, էջ 3, Դիտողություններ Դ. Դեմիքրատիկի արձակի մասին. «Գրական թերթ», 1939, № 19, էջ 4:

²³ Խ. Այվազյանի և Դ. Դեմիքրատիկի պաշտպանական պատմվածքները. «Սովետական գրականություն», 1941, № 9–10, էջ 76–78, նույնի՝ Խոհական արձակի նմուշներ. «Սովետական գրականություն», 1941, № 12, էջ 85–86, նույնի՝ Կազմավորվող սոցիալիստական մարդու կերպարման ճանապարհին. «Սովետական գրականություն», 1941, № 5–6, էջ 100–102:

²⁴ Հր. Մուրադյանի և Խ. Սարգսյանի «Սովետական գրականություն և արվեստ», 1942, № 9–10, էջ 117–123, Խ. Սարգսյանի «Սովետահայ պրոզան հայրենական պատերազմի ժամանակ». Դ. Դեմիքրատիկի «Սովետական գրականություն և արվեստ», 1943, № 2, էջ 87–96:

քանի դեռ չէր ծնվել «Վարդանանքը»: Մինչ այդ Դ. Դեմիրճյանն ավելի շատ ճանաչվում ու մեծարվում էր որպես դրամատուրգ, հասկապես իբրև անգուգական «Քաջ Նազարի» հեղինակ: Բայց, ահա, պատերազմի դաժան օրերին հրատարակվեց գրողի պատմավեպը, որը նրա ստեղծագործական մեծ հաղթանակն էր, արձակի ասպարեզում կատարած երկարատև որոնումների փառապսակը: Այս անմահ ստեղծագործությամբ Դ. Դեմիրճյանի հեղինակությունը բազմապատկվեց, քանզի նա հավասարի իրավունքով կանգնեց հայոց պատմավեպի մեծագույն վարպետների՝ Բաֆֆու և Մուրացանի կողքին: Հասկանալի է, որ ժողովրդի մեջ խանդավառ ընդունելություն գտած գեղարվեստական կոթողը պետք է արժանանար նաև գրական քննադատության ատանձնահատուկ ուշադրությանն ու դրվատանքին:

Եվ ահա, Դ. Դեմիրճյանի «Վարդանանքին» նվիրված հոդվածներով հանդես են գալիս Է. Թոփչյանը²⁵, Ս. Ղազարյանը²⁶, Բ. Կուսիկյանը²⁷, Հ. Միրասը²⁸, Վ. Թերզիբաշյանը²⁹, Ռ. Աթայանը³⁰: Վաղեմի գրչեղբոր գլուխգործոցի մասին իր խոսքն է ասում նաև մեծն Ավետիք Բսահակյանը³¹: Դ. Դեմիրճյանի պատմավեպի նկատմամբ գրականագիտական մտքի հետաքրքրությունն այսքանով չի սահմանափակվում: Հետագա տարիներին գրվում են նոր հոդվածներ, ավելին՝ երևան է գալիս նրա նշանավոր պատմավեպին նվիրված մենագրություն³²:

Հետաքրքիր է, որ քննադատությունն ու գրականագիտությունը ատանձնապես ծանրացել են Դ. Դեմիրճյանի երկու առավել նշանակալից երկերի՝ դրամատիկական («Քաջ Նազար») և արձակ գլուխգործոցների («Վարդանանք») վրա՝ հանդես գալով ոչ միայն հոդվածներով, այլև՝ լուրջ ուսումնասիրություններով: Ավելի քան երկու տասնամյակ սովետահայ մեծ գրողի թատերագրությունն էր ուշադրության կենտրոնում, իսկ «Վարդանանքի» հրապարակումից հետո առաջին պլան է գալիս արձակագիր Դ. Դեմիրճյանը, որին քննադատությունն արդեն դասում է հայ արձակի և գրականության ամենամեծ վարպետների շարքը: Հենց այդ շրջանում էլ, այսինքն՝ գրողի պատմավեպի հաղթարշավից հետո՝ 1945-ին, լայնորեն նշվում է նրա գրական գործունեության 50-ամյա հորեյանը: Տեղի է ունենում հանդիսավոր երեկո, կարդացվում է զեկուցում, հնչում են ելույթներ, տպագրվում բազմաթիվ հոդվածներ, որոնց հեղի-

²⁵ Է. Թոփչյան. Սովետահայ գրականության առաջին պատմավեպը. – «Սովետական գրականություն և արվեստ», 1944, № 4–5, էջ 65:

²⁶ Ս. Ղազարյան. Մի քանի դիտողություններ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի լեզվի մասին. – «Սովետական Հայաստան», 1944, № 117, էջ 2:

²⁷ Բ. Կուսիկյան. Վերակենդանացած պատմություն. – «Լիտերատուրա և իսկուստի», 2. IX. 1944 (ռուս.), «Կոմունիստ», 1944, № 180, էջ 4:

²⁸ Հ. Միրաս. Դեմիրճյանի օրվանում պրեզիդենտ արմյան. – «Օգոնյոկ», 1944, թիվ 19, էջ 11 (ռուս.):

²⁹ Վ. Թերզիբաշյան. Վարդանանք. – «Կոմունիստ», Երևան, 1944, № 67, էջ 3–4:

³⁰ Ռ. Աթայան. Դեմիրճյանի «Վարդանանքը» իբրև պատմավեպ. – «Սովետական գրականություն և արվեստ», 1945, № 3–4, էջ 65–77:

³¹ Ավ. Բսահակյան. Դ. Դեմիրճյան – «Վարդանանք»: Ե., Հայպետհրատ, 1944: Գրախոսություն. – «Սովետական Հայաստան», 1944, № 117, էջ 2:

³² Վ. Ս. Նալբանդյան. Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը», Երևան, 1955, 262 էջ:

նակներն էին Ավ. Իսահակյանը, Ստ. Ջորյանը, Ն. Ջարյանը, Տ. Հախումյանը, Է. Թովիցյանը, Մ. Մկրտչյանը, Վ. Թերզիբաշյանը և ուրիշներ³³: Հոբեյանի առիթով՝ գրողի անցած ուղու, ստեղծագործության մասին արտահայտված խոհերն ու դատողությունները, հեղինակի բնորոշ ու արժեքավոր երկերի վերլուծություններն ու բնութագրումները զգալիորեն հարստացրին Դեմիքրատիկ տաղանդի ու վարպետության, մեր գրականության մեջ նրա ստեղծագործության ունեցած արժեքի ու նշանակության, գեղարվեստական գործունեության հասարակական-պատմական նշանակության վերաբերյալ եղած պատկերացումը: Մանավանդ որ հաջորդ տարիներին ևս (1946–1952) մամուլում տպագրվեցին հայ նշանավոր գրողին նվիրված նոր հոդվածներ. Ռ. Վարդազարյանը («Սովետական Հայաստան» ամսագիր, 1946, № 7, էջ 41–42), Գ. Հովսեփյանը («Դ. Դեմիքրատիկ երկերի առաջին հատորը».– «Գրական թերթ», 1947, № 5, էջ 3–4), Մ. Մազմանյանը (Դ. Դեմիքրատիկ – «Երկերի ժողովածու» 1-ին հատոր.– «Սովետական գրականություն և արվեստ», 1947, № 3, էջ 122–129), Հր. Մուրադյանը («Պատմական թեմատիկայի խնդիրը. «Վարդանանք» վեպը».– «Գրական թերթ», 1947, № 23, էջ 2), Խ. Սարգսյանը («Դ. Դեմիքրատիկ մանրապատումների մասին».– «Տեղեկագիր», ՀՄՄՀ գիտ. ակադ. հաս. գիտ., 1947, № 1, էջ 77–87):

Դեմիքրատիկության հերթական աշխուժացումը տեղի է ունենում յոթ տարի հետո՝ 1952-ին, գրողի ծննդյան 75-ամյակի առթիվ: Այս նոր հոբեյանական հանդիսությունների ժամանակ նույնպես կարդացվում է զեկուցում, տեղի են ունենում ելույթներ և տպագրվում արժեքավոր նյութեր: Տակավին 1951-ին գրողի մոտալուստ հոբեյանի առիթով հանդես է գալիս Հ. Մկրտչյանը³⁴: Հոբեյանական տարում հոդվածներ են տպագրում Մ. Աղաբաբյանը, Մ. Բազյանը, Ն. Ջարյանը, Է. Թովիցյանը, Վ. Նալբանդյանը, Տ. Հախումյանը և ուրիշներ³⁵: Հաջորդ չորս տարիների ընթացքում՝

³³ Ավ. Իսահակյան. Դ. Դեմիքրատիկ: Ողջուն հոբեյարին, նրա գրական գործունեության 50-ամյակի առթիվ.– «Գրական թերթ», 1945, № 11, էջ 2, Մտ. Ջորյան. Դ. Դեմիքրատիկ: Ողջուն հոբեյարին, նրա գրական գործունեության 50-ամյակի առթիվ.– «Գրական թերթ», 1945, № 11, էջ 2, Ն. Ջարյան. Ժողովրդական անմահության երգիչը.– «Գրական թերթ», 1945, № 12, էջ 3, Տ. Հախումյան. Դեմիքրատիկի դրամատուրգիայի էականը.– «Գրական թերթ», 1945, № 11, էջ 3, Է. Թովիցյան. Խոսքի մեծ վարպետը.– «Սովետական Հայաստան», 1945, № 80, էջ 4, Մ. Մկրտչյան. Մեր ողջունը հոբեյարին.– «Գրական թերթ», 1945, № 11, էջ 3, Վ. Թերզիբաշյան. Մեր ողջունը հոբեյարին.– «Գրական թերթ», 1945, № 11, էջ 3:

³⁴ Հ. Մկրտչյան. Դեմիքրատիկի Դեմիքրատիկ (ծննդյան 75-ամյակի առթիվ).– «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1951, № 36, էջ 27–29:

³⁵ Մ. Աղաբաբյան. Սովետահայ արձակի վարպետը (Դեմիքրատիկի ծննդյան 75-ամյակի առթիվ).– «Ավանգարդ», 1952, № 26, էջ 3, Մ. Բազյան. Սովետահայ արձակի խոշորագույն վարպետը (Դեմիքրատիկի Դեմիքրատիկի ծննդյան 75-ամյակի առթիվ).– «Կոմունիստ», Բաքու, 1952, № 35, էջ 3–4, Ն. Ջարյան. Դեմիքրատիկի Դեմիքրատիկ (ծննդյան 75-ամյակի առթիվ).– «Գրական թերթ», 1952, № 6, էջ 3, Է. Թովիցյան. Դեմիքրատիկի Դեմիքրատիկ (ծննդյան 75-ամյակի առթիվ).– «Սովետական Հայաստան», 1952, № 50, էջ 3, Հ. Մկրտչյան. Դեմիքրատիկի Դեմիքրատիկ (ծննդյան 75-ամյակի առթիվ).– «Սովետական գրականություն և արվեստ», 1952, № 2, էջ 80–95, Վ. Նալբանդյան. «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը (տեսական-քննադատական).– «Սովետական գրականություն և արվեստ», Երևան, 1952, № 7, էջ 110–130, Տ. Հախումյան. Դեմիքրատիկի Դեմիքրատիկ.– «Կոմունիստ», Երևան, 1952, № 50, էջ 3, Ա. Չոպուր

մինչև գրողի մահը, նրա մասին գրվում են ևս մի քանի արժեքավոր ուսումնասիրություններ ու հոդվածներ³⁶:

Այսպիսով, պատերազմի վերջին տարիներին և հատկապես հետպատերազմյան շրջանի սկզբում (1945–1952) նախ «Վարդանանք» մեծարժեք պատմավեպի լույսընծայման և ապա Դ. Դեմիրճյանի վերահաս երկու հոբելյանների՝ գրական գործունեության 50-ամյակի և ծննդյան 75-ամյակի ուրախ առիթներով քննադատությունը նորից ու նորից, աստիճանաբար առավել լրջորեն ու բազմակողմանիորեն անդրադառնում է մեծ գրողի ստեղծագործությանը: Ձեկուցումներում, էլույթներում և հոդվածներում բնութագրվում է հեղինակի անցած ճանապարհը, վերլուծվում առավել արժեքավոր ու բնորոշ երկերը, խոսվում նրա տաղանդի, ինքնատիպության ու պրոֆեսիոնալ վարպետության, արվեստի և առհասարակ գեղարվեստական մտածողության առանձնահատկությունների մասին: Նշանավոր արձակագրի ու դրամատուրգի գրական վաստակի գիտական ուսումնասիրության առաջին, նախնական փուլն է սա, երբ նրան նվիրված գրականությունը սկսում է բարձրանալ իսկական պրոֆեսիոնալ մակարդակի: Չէ՞ որ ավելի քան կես դար միայն բանավոր քննարկումների (գեկուցումներ, էլույթներ) ու մամուլի տպագիր արձագանքների (հոդվածներ) միջոցով էր կատարվել դեմիրճյանագիտության սաղմնավորումն ու ձևավորումը: Հասունացումը տեղի ունեցավ ավելի ուշ. 1950-ական թվականներին և 1960-ական թվականների սկզբին միայն երևան եկան գրողի ստեղծագործության խոր ու բազմակողմանի քննությանը նվիրված գիտական ծավալուն ուսումնասիրություններ, մենագրություններ: Գրականագետ Հր. Մուրադյանի 1954 թ. տպագրած «Դերենիկ Դեմիրճյան» գրքուկը մեծ գրողի գեղարվեստական հարուստ ժառանգության քննության ու արժեքավորման նախնական փորձն էր և դեռևս խոր ու լիավարտ ուսումնասիրության արժեք չուներ: Գրականագետը, սակայն, շարունակելով իր սկսած արգասավոր գործը, յոթ տարի անց, 1961-ին արդեն հրատարակում է Դեմիրճյանին նվիրված իր նոր, ստվարածավալ ու ամբողջական աշխատությունը³⁷: Սա արդեն անհամեմատ ավելի ավարտուն, փաստալից ու ընդգրկուն աշխատություն էր, որը հեղինակի գիտահետազոտական երկարամյա ու տքնաջան աշխատան-

Հ - յ ա ն. Սովետահայ նշանավոր գրողը (Դ. Դեմիրճյանի ծննդյան 75-ամյակի առթիվ).- «Սովետական Վրաստան», Թբիլիսի, 1952, № 14, էջ 3:

³⁶ Վ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն. Պատմական վեպի մի քանի հարցեր և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը (տեսական-քննադատական).- «Սովետական գրականություն և արվեստ», 1953, № 11, էջ 98–132, Է դ. Թ ո ս չ յ ա ն. Դերենիկ Դեմիրճյան.- «Տեղեկագիր» ՀՄՄՀ գիտ. ակադ. հաս. գիտ., 1954, № 7, էջ 3–18, Ա. Ն ա գ ի ն յ ա ն. Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» հեքիաթ-կոմեդիան.- Սովետահայ գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը, 1954, էջ 85–117, 165–169, Տ. Հ ա խ ու մ յ ա ն. Դեմիրճյան դրամատուրգը.- «Սովետական արվեստ», 1956, № 3, էջ 9–18, Ա ը ա ը ու ի. Պատմությունը և ժողովուրդը (Դ. Դեմիրճյանի մասին).- Վարդանանք պատմավեպ 2 հատորով, թարգմանությունը՝ Ա. Թադևոսյանի, Մ. Գոսլիտիզդատ 1956, գրախոսություն).- «Լիտերատուրնայա գազետա» 1956, № 64, էջ 3 (ռու.), Ա. Զ լ ո բ ի ն. «Տասնհինգ հարյուրամյակ էտ»: Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի մասին.- «Կոմունիստ», Երևան, 1956, № 170, էջ 3, Ա. Մ կ ը յ ա ն. Վեպ ժողովուրդ-մարտիկի մասին.- «Դրուժբա նարոդով», 1956, № 5, էջ 168–170 (ռու.):

³⁷ Հ ը. Մ ու ը ա ղ յ ա ն. Դ. Դեմիրճյան, Երևան, 1961:

քի արդյունքը լինելով՝ երևույթ էր հայ նշանավոր գրողի գեղարվեստական ժառանգության ուսումնասիրության ճանապարհին: Հր. Մուրադյանը դեմիրճյանագիտության առաջին վաստակաշատ երախտավորներից էր: Նույնը պիտի ասել և Տ. Հախումյանի մասին, որի՝ սովետահայ դասականի դրամատուրգիային նվիրված հսկայածավալ ուսումնասիրությունը (ավելի քան 1200 էջ) գրված էր գիտական բարեխղճությամբ և պրոֆեսիոնալ բարձր մակարդակով: Այդ աշխատության տպագրված համառոտ տարբերակը գրողի գրական ժառանգության կարևոր մի մասին (դրամատուրգիային) նվիրված առաջին լուրջ աշխատությունն էր³⁸:

Տ. Հախումյանի և Հր. Մուրադյանի այս արժեքավոր գրքերը երևան եկան չորս տարվա (1958–1961 թթ.) ընթացքում և այդ կարճ ժամանակահատվածը, ամենայն իրավամբ, պետք է համարել դեմիրճյանագիտության հասունացման մի նոր, ավելի բարձր շրջափուլ: Չէ՞ որ մեծ գրողի հարուստ ու բարդ ստեղծագործության ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունն իր գոյության տասնամյակների ընթացքում, լրագրական լղարիկ թղթակցություններից, կարճառոտ ու հպանցիկ գրախոսություններից ու թատերախոսություններից, հավուր պատշաճի հորելյանական և ապա համեմատաբար լրջմիտ և ընդհանրացնող վերլուծական ու տեսական-քննադատական բնույթի հոդվածներից ու առաջին փոքրածավալ գրքույկներից (Հր. Մուրադյանի և Վ. Նալբանդյանի), որոնք հեղինակի գրական ժառանգության ուսումնասիրության նախափորձերն էին, վերջապես եկել հասել էր այդ ժառանգության խոր ու համապարփակ մասնագիտական լուսարանության և արժեքավորման բաղձալի աստիճանին: Հասկանչական է, որ 1960-ական թվականներից սկսած ոչ միայն առանձին ուսումնասիրություններ են նվիրվում հայ մեծ գրողի բարդ ու հակասական ստեղծագործության կամ դրամատուրգիայի քննությանը, այլև մի փոքր ավելի ուշ, 1970-ական թվականների սկզբին նրա գրական աշխատանքի լաբորատորիայի վերաբերյալ գիրք³⁹ է լույս տեսնում: Սա ստույգ վկայությունն էր այն բանի, որ իրոք սկսվել է Դ. Դեմիրճյանի գրական ժառանգության գիտական խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունը:

* * *

Հետաքրքիր է նշել, որ հայ մեծ գրողի ստեղծագործության նկատմամբ բուռն ու արգասավոր հետաքրքրության հաջորդ բռնկումը և դեմիրճյանագիտության զարգացման մյուս ու ավելի հասուն շրջանը նորից ծայր է առնում նրա հերթական հորելյանի (ծննդյան 100-ամյակը) տոնակատարության ժամանակ՝ 1977-ին, և դարձյալ տևում է մի տասնամյակ ու նույնիսկ ավելի, քան զի 80-ական թվականների գրեթե վերջին տպագրվում է գրողի դրամատուրգիային նվիրված մի նոր գիրք⁴⁰: Դեմիրճյանի 100-ամյակի կապակցությամբ նախապես և հատկապես տոնակատարության օրե-

³⁸ Տ. Հ ա խ ու մ յ ա ն. Դ. Դեմիրճյանի դրամատուրգիան, Երևան, 1958:

³⁹ Ա. Բ ա դ դ ա ս ար յ ա ն. Դ. Դեմիրճյանի ստեղծագործական աշխատանքը և վարպետությունը, Երևան, 1973:

⁴⁰ Ա. Հ ու ն յ ա ն. Դերենիկ Դեմիրճյանի դրամատուրգիան, Երևան, 1988:

րին գրվեցին և տեղական ու միութենական մամուլում տպագրվեցին հայ և ռուս քննադատների նոր ուսումնասիրություններ, ընթերցվեցին զեկուցումներ, եղան ոչ միայն հավուր պատշաճի, այլև հետաքրքիր ու ինքնատիպ էլույթներ: Ամենակարևորն ու ուշագրավը, սակայն, նույն այդ հորեյանական առիթով կազմված և մի քանի տարի հետո (1980-ին) տպագրված հոդվածների ժողովածուն էր, որ հրատարակության էր պատրաստել Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը: Գրքում տարբեր հեղինակների հոդվածները և ուսումնասիրությունները նվիրված էին Դ. Դեմիրճյանի գրական ուղուն, վաղ շրջանի ստեղծագործությանը, «Քաջ Նազար» կատակերգությանը, «Վարդանանք» պատմավեպին, գրողի լեզվին ու ոճին, վարպետությանը, դրամատուրգիային, թատերական արվեստի մասին ունեցած ըմբռնումներին, զեղագիտական հայացքներին: Հավաքածուում ամփոփված հոդվածները, որ առավել կամ նվազ չափով հետաքրքիր էին ու արժեքավոր՝ բարձրացնում էին Դ. Դեմիրճյանի զեղարվեստական վաստակի ամենաեական ու կարևոր կողմերին վերաբերող հարցեր՝ ջանալով գտնել դրանց համարժեք պատասխաններ: Ըստ այդմ, սույն գրքում տարբեր հեղինակների համառ ջանքերով, փաստորեն, լուսաբանվել են գրողի ստեղծագործության ամենահանգուցային խնդիրները: Այդ արժեքավոր հավաքածուին իրենց մասնակցությունն էին բերել մեր ճանաչված գրականագետներն ու թատերագետները, գրողի ստեղծագործությամբ հետաքրքրվող լեզվաբանները և դրամատուրգները: Անվանի գրականագետ Ս. Աղաբաբյանի՝ գրողի ստեղծագործական ուղին ներկայացնող հոդվածից հետո գրքում զետեղվել էին Ա. Հունանյանի «Դեմիրճյանի դրամատուրգիական մուտքը», Հովհ. Ղազարյանի «Դեմիրճյանի ետհոկտեմբերյան շրջադարձը», Ալ. Ջաքարյանի «Քաջ Նազար» կատակերգության շուրջ», Մ. Յուզբաշյանի «Քաջ Նազարի» անդրադարձումները կյանքի հայելու մեջ», Բ. Հարությունյանի «Քաջ Նազարի» բեմական պատմության դրվագները», Հրայր Թամրազյանի «Գիրք ծաղկանցի» պատմական հիմքերը, Լ. Խալաթյանի «Երկիր հայրենին» բեմի վրա», Կ. Տիրատուրյանի «Դ. Դեմիրճյանը Վարդանանց պատերազմի բնույթի մասին», Զ. Ավետիսյանի «Դիմանկարի ստեղծման հոգեբանությունը «Վարդանանք» պատմավեպում», Մ. Ավդալբեկյանի «Վարդանանքի» ակունքների շուրջ», Լ. Կարապետյանի «Մեսրոպ Մաշտոց» վեպի պատմական աղբյուրների հետքերով», Մ. Ավագյանի «Դ. Դեմիրճյանի ստեղծագործության ոճի հարցեր», Լ. Հախվերդյանի «Դեմիրճյանը դերասանի արվեստի մասին» հոդվածներն ու ուսումնասիրությունները: Տպագրված նյութերի այս ցանկն արդեն ցույց է տալիս, թե հեղինակներն ինչպիսի բազմակողմանի հետաքրքրություն են ցուցաբերել գրողի ստեղծագործության նկատմամբ՝ ամենատարբեր տեսանկյուններից քննելով ու արժեքավորելով այն: Այս ժողովածուն ուշագրավ է իր մեջ զետեղված հոդվածների թեմատիկ և պրոբլեմատիկ հարստությամբ ու բազմազանությամբ, հարցադրումների սրությամբ և ընդհանրացումների լայնությամբ: Դրանցում կան թարմ ու հետաքրքիր մտքեր, արժեքավոր դիտարկումներ ու կոահումներ, որոնք հարստացնում են մեծ գրողի մասին մեր ունեցած պատկերացումները: Սույն գրքի լույս աշխարհ գալը նշանակալից էր նաև այն տեսակետից, որ ազդարարում էր դե-

միքրատիկության զարգացման նոր, առավել հասուն շրջափուլի սկիզբը: Չէ՞ որ դրանից հետո, արդեն 1980-ական թվականներին լույս տեսան մեծ գրողի ստեղծագործությանը նվիրված երեք նոր արժեքավոր մենագրություններ, որոնց հեղինակները գրականագետներ Հր. Թամրազյանը, Վ. Մկրտչյանն ու Ա. Հունանյանն էին:

Առաջինը հրապարակ եկավ բազմափաստակ գիտնական Հր. Թամրազյանի «Դերենիկ Դեմիքրատիկ» աշխատությունը (1986 թ.), որը արագորեն սպառվելով՝ հաջորդ տարի վերանշակված ու լրացումներով վերահրատարակվեց: «Նշանավոր մարդկանց մասին» մատենաշարով տպագրված այս գիրքը, որ նախատեսված է ընթերցող լայն զանգվածների համար, բնականաբար, փոքր ծավալ ունի և հատուկ միտվածություն՝ պարզ ու դյուրամատչելի, բայց խորությամբ ու գիտականորեն բացահայտել գրողի ստեղծագործության իմացաբանական-գեղագիտական հարստությունները: Եվ պետք է ասել, որ հեղինակը հաջողությամբ է լուծել իրեն առաջադրի այդ յուրովի դժվար խնդիրը: Հստորեն միահյուսելով Դեմիքրատիկ կյանքի անձնական ու ստեղծագործական փաստերը՝ գրականագետն իր գրքում ներկայացրել է գրողի անցած բարդ ու հակասական, բայց արգասավոր ճանապարհը, բացահայտել է նրա ձիրքի ու վարպետության աստիճանական, երբեմն էլ թռիչքաձև զարգացման ներքին տրամաբանությունը, անհամաչափ գրական առաջընթացի կենսական-հոգեբանական ու հասարակական-գեղագիտական օրինաչափությունները: Հր. Թամրազյանը գրքում գիտականորեն քննում ու արժեքավորում է Դ. Դեմիքրատիկ թե՛ պոեզիան ու արձակը և թե՛ դրամատուրգիան՝ վարպետությամբ վերլուծելով մեր գրականության դասականի տարբեր ժանրի փոքր ու մեծ գործերը, բանաստեղծություններն ու պոեմները, պիեսները և վեպերը: Առանձնապես տպավորիչ են «Քաջ Նազարին» ու մանավանդ «Վարդանանքին», ինչպես և գրողի նշանավոր պատմվածքներին, հատկապես «Գիրք ծաղկանցին» նվիրված էջերը: Ժամանակագրական կարգով ներկայացնելով գրողի բազմափուլի ստեղծագործությունը, Հր. Թամրազյանն ամբողջացնում է նրա գրական դիմանկարը և անցած ճանապարհի պատկերը: Քննադատը ցույց է տալիս ոչ միայն Դ. Դեմիքրատիկի ստեղծագործական ուղու բարդությունները, անկումներն ու վերելքները, այլև նրա տաղանդի ու վարպետության առանձնահատկությունները, նախասիրած թեմաների, պատկերած կյանքի ու հերոսների յուրատիպությունը՝ առանձնացնելով ու շեշտելով գրողի երկերի առավել բնորոշ հատկանիշները՝ հոգեբանական հարստությունը, փիլիսոփայական խորքն ու դրամատիզմը:

Հր. Թամրազյանի այս գիրքն արժեքավոր ներդրում էր մեծ գրողի գրական ժառանգության ուսումնասիրության գործում և անառարկելիորեն ապացուցեց, որ դեմիքրատիկությունը թևակոխել էր իր զարգացման նոր, առավել բարձր շրջանը: Դրա մի նոր վկայությունը եղավ Վ. Մկրտչյանի «Դերենիկ Դեմիքրատիկ» աշխատությունը (1987), որը մեծ գրողի ողջ ստեղծագործական կյանքն ու ժառանգությունը գիտական պատշաճ մակարդակով ու համակողմանիորեն քննության առնելու երրորդ հաջող փորձն էր՝ Հր. Մուրադյանի (1961) և Հր. Թամրազյանի (1986) արժեքավոր մենագրություններից հետո:

Վ. Մկրտչյանի այս գիրքը տասնամյակների համառ ու հետևողական գիտահետազոտական աշխատանքի արդյունք է: Հայ նշանավոր գրողի հարուստ ու բազմաժանր ստեղծագործությունը գրեթե չորս տասնամյակ զբաղեցրել է գրականագետին, եղել է նրա մասնագիտական հետաքրքրությունների գլխավոր ու մնայուն առարկան: Տակավին 1950-ական թվականներից նա նվիրվել էր Դ. Դեմիրճյանի երկերի քննության ու գնահատության շնորհակալ գործին: Մանրակրկիտ ու համակողմանիորեն ուսումնասիրելով հեղինակի գեղարվեստական ժառանգությունը, ծանոթանալով նրա մասին եղած ողջ գրականությանը և արդեն խորապես ճանաչած նյութը գիտականորեն համակարգելով՝ Վ. Մկրտչյանը մեթոդաբանական ճիշտ դիրքերից, գեղագիտական բարձր ու կայուն չափանիշներով վերլուծել ու արժեքավորել է գրողի վաստակը, ուրվագծել նրա անցած բարդ ու հակասական ճանապարհը, ստեղծագործական որոնումների, հասարակական և գրական հայացքների ձևավորման բարդ ու դժվարին ընթացքը: Ջանալով ուրվագծել Դ. Դեմիրճյանի գործունեության ամբողջական պատկերը՝ աշխատության հեղինակը գրողին և նրա գեղարվեստական արարչությունը տեսել է իր դարաշրջանի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի բարդ ու բազմազան կապերի, փոխառնչությունների ու փոխազդեցությունների ոլորտում, ձևավորման և զարգացման ոչ դյուրին, բայց նպատակասլաց ու արդյունավոր ընթացքի մեջ: Այսպիսի մոտեցումը քննադատին հնարավորություն է ընձեռել մեծ գրողի ստեղծագործական կյանքը ներկայացնել կենսական-պատմական լայն համապատկերի վրա, կենդանի շարժման մեջ և ցույց տալ, որ նրա խոշոր ու ինքնատիպ տաղանդը բարձրացել է անցյալի և նոր ժամանակների հայ, ինչպես և ռուս ու եվրոպական գրականության լավագույն ավանդույթների ամուր և հուսալի հիմքի վրա՝ միաժամանակ սնվելով ժողովրդական բանահյուսության կենդանի հյութերով:

1980-ական թվականներին դեմիրճյանագիտության նոր վերելքն ու հասունությունը վկայող մյուս արժեքավոր գիրքը գրականագետ-թատերագետ Ա. Հունանյանի «Դերենիկ Դեմիրճյանի դրամատուրգիան» աշխատությունն է: Տ. Հախումյանի տպագրած համանուն մենագրությունից հետո այս ուսումնասիրությունը նոր խոսք էր մեծ գրողի թատերագրության մասին, մի ուշագրավ մեկնություն, ինչն ընդգծվել է գրքի մասին տպագրված գրախոսություններում:

Դ. Դեմիրճյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարության կապակցությամբ նախապես ու հետո էլ՝ 1980-ական թվականներին ստեղծված գրականությունը նախորդ շրջանի համեմատ ավելի բարձր որակ էր ներկայացնում և նշանավորեց դեմիրճյանագիտության իսկական հասունությունը: Այդ ժամանակահատվածում հայ դասականին նվիրված ուսումնասիրություններին ու հոդվածների մեծ մասին բնորոշ է խոր գիտականությունն ու օբյեկտիվությունը, մասնագիտական բարձր մակարդակը: Դրանց հեղինակները կարողացել են հաղթահարել իրենց նախորդների անխուսափելի թերությունները, հրաժարվել գեղարվեստական ստեղծագործության վերլուծության ավանդական ձևերից, տեսական կաղապարված պատկերացումներից, հնացած սկզբունքներից ու չափանիշներից: Ունենալով գրական երկերի գնա-

հատման ճիշտ ելակետեր՝ նրանք մերժել են հակազիտական ու գոեհիկ սոցիոլոգիական զանազան պատկերացումները և նորովի են քննության առել գրողի վաստակը: Այս ամենի շնորհիվ գրականագետները կատարել են մի քայլ առաջ իրենց նախորդների համեմատությամբ՝ դեմիքրճյանագիտությունը բարձրացնելով մի նոր, ավելի բարձր աստիճանի:

Նկատենք, որ դեմիքրճյանագիտության զարգացման ճանապարհին կարևոր նշանաձող էր նաև Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանի կազմած և 1957-ին տպագրած «Դերենիկ Դեմիքրճյան» մատենագիտությունը՝ Հր. Մուրադյանի խմբագրությամբ ու առաջաբանով: Չէ՞ որ ամեն մի գրողի կյանքի և ստեղծագործական ուղու, նրա գեղարվեստական ողջ ժառանգության գիտական ուսումնասիրության դրուրացման ու արգասավորման տեսակետից անչափ կարևոր է տվյալ հեղինակի երկերի և նրա մասին եղած քննադատական-մեմուարային գրականության ամբողջական մատենագիտությունը: Եվ այս առումով Ազգային գրադարանը ժամանակին շատ օգտակար գործ է կատարել:

Դեմիքրճյանագիտության ձևավորման ու զարգացման գործում պակաս կարևոր չէր և գրողի երկերի հրատարակությունը: Եվ նախահեղափոխական շրջանում, և խորհրդային տարիներին տպագրվել են նրա առանձին երկերը, հատկապես «Վարդանանքն» ու «Քաջ Նազարը», ինչպես և բանաստեղծական ու արձակ երկերի ժողովածուները: Միայն կյանքի վերջալույսին Դ. Դեմիքրճյանը հնարավորություն ստացավ հրատարակել սեփական երկերի ժողովածուն՝ վեց հատորով, որը գեթ ընդհանուր գծերով ներկայացնելու էր անցած գրական ճանապարհը, մոտավոր պատկերացում էր տալու իր հարուստ ու բազմաժանր ստեղծագործության մասին: Հեղինակը հասցրեց հրատարակության ներկայացնել և տպագրված տեսնել պետական ուղղմամբ նախատեսված վեցհատորյակի միայն չորս գրքերը: Մնացյալ երկու (5, 6) և լրացուցիչ 7-րդ ու 8-րդ հատորները լույս տեսան գրողի մահից հետո: Կազմողը և խմբագիրը տողերիս հեղինակն էր: Այդ ութ հատորյակի տպագրությունը Դ. Դեմիքրճյանի գրական վաստակի քիչ-շատ ամբողջական հրատարակության նախնական փորձն էր: Դրանից տարիներ անց Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը իրականացրեց նրա գրական ժառանգության գիտական հրատարակությունը 14 հատորով: Ու թեև ակադեմիական այս հրատարակությունն էլ չի կարելի համարել լիակատար (հատկապես նկատի ունենալով դրամատուրգիան, տպագրված պիեսներն ու տարբերակները), այնուամենայնիվ կատարվել է հսկայածավալ աշխատանք պահանջող մեծարժեք մի գործ՝ արժանի ամենայն դրվատանքի:

Ձևավորման ու զարգացման երկար ու արգասավոր ճանապարհ անցած դեմիքրճյանագիտությունը, որ վաղուց թևակոխել է իր հասունության շրջանը, շարունակում է զարգանալ և առաջիկա տասնամյակներում, անկասկած, գիտահետազոտական աշխատանքների ասպարեզում նոր, ավելի բարձր բնագծեր կնվաճի: